

ԱՆՑԵԼՔ

ԶՕՐ · Մ · ՄԵԼԻՔ - ՄՈՒՐԱՏԵԱՆ

Թաւրիզում, յունւ . 2-ին, մեռել է Հայաստանի հանրապետական բանակի զօրավար Միքայէլ Մելիք - Մուրատեանը : Ծնւել էր 1868թ . Հին Նախիջեւանում : Կրթութիւնը սուացել էր Երեւանի Գիմնազիայում եւ Թիֆլիսի Միքայէլեան սպայական դպրոցում : Ապա 17 տարի ծառայել էր 156-րդ ելիկաւետպոլեան գնդում , որի կենտրոնը գտնուում էր Սարիղամիչում : Մասնակցել էր ոուս - ճապոնական պատերազմին :

Համաշխարհային պատերազմի սկիզբը 39-րդ զօրաբաժնում էր , Կարնոյ ճակատին , գլխաւոր պաշտօնով : Մասնակցեց պատերազմական բազմաթիւ գործովութիւնների , ինչպէս եւ Կարնոյ գրաւման՝ 1916-ին , որի համար ստացաւ փոխ - գնդապետի աստիճան : 1916թ . ամառը , երբ հայկական կամաւորական գնդերը վերակազմւեցին , նշանակւեց 6-րդ գնդի հրամանատար եւ ամբողջ երկու տարի գործեց Մուլդուղ - Ռեւանդուղ - Մուսուլի ուղղութեամբ :

Հայաստանի անկախութեան շրջանում Մելիք - Մուրատեանը , արդէն զօրավար , հրամանատարական պաշտօններ կատարեց Մուրամալուի եւ Դարալազեազի շրջաններում : Խորհրդայնացումից յետոյ , 1921թ . յունարին ձերբակալելով՝ նետւեց Երեւանի բանուը , բայց փետրւարեան ապստամբութիւնը , շատերի հետ , նրան էլ ազատեց : Նա նշանակւեց Երեւանի քաղաքի եւ շրջանի ինքնապաշտպանութեան պետ եւ երկրորդ խորհրդայնացումից յետոյ , տարագրութեան հետ , անցաւ Թաւրիզ , ուր եւ ապրեց մինչեւ կեանքի վերջին օրերը :

Զօր . Մելիք Մուրատեանը ազնիւ , շիտակ , վերին աստիճանի պարտաճանաչ եւ օրինապահ մարդ ու զինուրական էր եւ ամբողջ էռթեամբ նւիրւած էր հայրենիքին :

ՎԱՐԴԱՆ ՄԱՆՈՒԵԱՆ

Նիսում , թոքատապից մեռել է ականաւոր ծովանկարիչ Վարդան Մախուեանը : Հանգուցեալը տրապիզոնցի էր , ծն . 1869թ . մայիս 25-ին : Նախական կրթութիւնը սուացել էր Տրապիզոնի ազգային

վարժարանում, Ս. էթմէքչեանի տնօրինութեան չըջանում։ Ապա աւարտելով կարնոյ Սանասարեան վարժարանը՝ անցել էր Գերմանիա եւ երեք տարի սովորել Բերլինի Գեղարւեստների Ճեմարանում, աշակերտելով բնանկարի հոչակաւոր վարպետ Բախտին ու ծովանկարիչ Կուդէին եւ մատնագիտանալով յատկապէս ծովանկարչութեան մէջ։ Պատերազմից առաջ արդէն անուն հանած նկարիչ էր Գերմանիայում, անդամ էր Verein Berliner Kunstlerնկարչ լնկերութեան, նկարահանդէսներ էր կազմակերպել, բազմաթիւ ճամբորդութիւններ կատարել՝ իր վրձինը կատարելագործելու նպատակով։

Պատերազմից յետոյ, Մախոխեանը հաստատեց Նիսում, ուր եւ մնաց մինչեւ մահ, դրեթէ ամէն տարի կատարելով ճամբորդութիւններ՝ գեղարւեստական տպաւորութիւններ ստանալու համար։ Մախոխեանը սիրում էր ծովը, խորապէս ծանօթ էր ծովի ասլրումներին եւ, Յ. Այլազովսկիից յետոյ, մեծաղոյն հայ ծովանկարիչն է։ Ունի բազմաթիւ ծովանկարներ՝ կտաւի վրա անմահացնելով բնութեան այդ տարերքի կեանքի այլազան կողմերը։ Իր նկարներից շտերը մեծ թանգարանների զարդն են կազմում։

